Գ· ՏԱՐԻ ԹԻԻ 999 ԵՐԵՔՇԱԲԹԻ 19 ՅՈՒՆԻՍ 1879

ԼՐԱԳԻՐ

ՏՆՕՐԷՆ ԽՄԲԱԳԻՐ
Ն Ի
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՆԻԿ· Մ· ԹԻՒԼՊԷՆՏՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ
Պ՚ալաթիա Ւէրլէմպէ Բազար
Խրսի Խանի դէմը Սամսար փո-
ղոց Թիւ 13

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ո՚ւեղեմ
Դ· Պօլսոյ համար
Տարեկան ՂՐՇ· 100
վեցամսեայ » 50
եռամսեայ » 25
Գաւառաց համար
Տարեկան ՂՐՇ· 150
վեցամսեայ » 75
եռամսեայ » 40
Օտար երկիր տարի 40 Ֆր·

ԹԻՐԹ 20ՓՐ· ՄԷԹԱԼԻՔ

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Հայաստանի բարւոքմանցը գործադրութեանը խնդրոյն վերայօք, այս երկրորդ անգամն է որ Սալիզպըրի մարդիզը բացատրութիւններ կ՚տայ։

Առաջին անգամ տուած էր Պերլինի դաշնագրին բոլոր յօդուածոցը գործադրութեանը վերայօք խորհրդարանին տուած բացատրութեանը մէջ, յիշեալ դաշնագրին 61րդ յօդուածին վերայերը կարգն եկեր էր խօսելու։

Մէկ մ՚ալ այս անգամ կ՚տայ, Լորտ Բարնարվօնի տասկ 61րդ յօդուածին գործադրութեանը վերայօք բրած հացմանը պատասխանելու համար։

Սալիզպըրի մարդիզը՝ առաջին անգամուն տուած բացատրութեանը մէջ ըսած էր թէ «Անուրանալի է թէ փոքր Ասիոյ հայարնակ գաւառներն բարենորոգմանց պէտք ունին, և Դուռն ալ արդէն մարդիկ ղրկած է տեղական պիտոյքները քննելով հասկնալու համար, բայց մինչև որ օսմ· դանձային վճռակը չբարւոքի, այնքան մեծ բարենորոգումներ պէտք չէ ըսպասել։»

Այս անգամ ալ գրեթէ նոյն իմաստ յայտարարութիւն մ՚է բրածը, միայն յաւելուած մ՚ընելով այն խօսքը՝ զոր բրած էր ասկէ բաւական տեն առաջ մասնաւոր կոչունքի մը մէջ թէ, «Տաճկաստան դառն փորձէ մը ազատեցաւ, որոյ գործոց գլուխը գտնուող պետական անձինքը և մասնաւորապէս խայրէտտին բաշա և Գարաթէոտորի բաշա, այս վարձէն դաս և խրատ առնելով եթէ հարկ եղած բարենորոգումները գործադրեն, օսմ· կառավարութիւնը կրնայ դարձեալ յարատեւութիւն և գոյութիւն մ՚ունենալ, իսկ եթէ այս վերջին առիթն ալ ապարդիւն ձգայ իրենց համար, այն տեն այնպիսի ապագայ ազէտք մը կ՚սպասէ, որոյ վախճանը ոչ ոք կրնայ այժմէն դիտնալ։»

Սալիզպըրի մարդիզը իր այդ առջի յայտարարութեան մէկ մասը միայն յառաջ կ՚բերէ այս անգամ, ըսելով թէ «բարենորոգումներն անհրաժեշտ են, որոնք միայն կարող են օսմ· տէրութեան գոյութիւնն ու յարատեւութիւնը պահպանել, բայց թէ օսմ· գանձը այսօր դրամ չունի եղեր այդ բարենորոգումները գործադրելու։»

Շատեր, և գրեթէ չկայ մարդ որ չգանգատի Սալիզպըրի մարգիզին այս ցուրտ և անտարբեր կարծուած յայտարարութեանը դէմ, Չի գրեթէ ամեն մարդ փոխանակ այս օրինակ յայտարարութեան մը՝ աւելի կ՚սպասէին լսել իրմէն որ ըսեր թէ՝ «Անգղիա այդ բարւոքումները այս ինչ օր և այս ինչ ժամուն անպատճառ գործադրել պիտի տայ Հայաստանի մէջ ր. Դրան, սա ուղէ թէ ոչ, և եթէ չգործադրէ՝ Անգղիա բանը կամ նա բանը պիտի ընէ Թուրքիոյ» և՚ն· և՚ն·

Անկեղծօրէն խօսելու համար, Սալիզպըրի մարդիզին այս անգամու բրած բուն իր այդ յայտարարութեանը դէմ մեր ներսէն ոևէ դժգոհութեան կամ գանգատանաց դրդում մը չզգալէն զատ, ընդհակառակն գոհութեան զգացում մ՚ալ կը տածեմք իրեն նկատմամբ, այս ասոնց անկեղծ և մերկամարմին յայտարարութիւն մը բրած ըլլալուն համար, որոյ ներքին ահարկու ճշմարտութիւն մը կ՚նշմարուի։

Սալիզպըրի մարդիզը տասկ առաջ ըսաւ և դարձեալ կ՚կրկնէ այսօր թէ՝ օսմ· կառավարութիւնը իր գոյութիւնն ու յարատեւութիւնը պահպանելու համար, անպատճառ պէտք է որ բարենորոգումները գործադրէ, որմէ միայն կախում ունի իր գոյութիւնը, իսկ եթէ չգործադրէ՝ այնպիսի ազէտք մը վրայ պիտի հասնի, որոյ ինչ վախճան ունենալը այժմէն անկարելի է գուշակել, —Այս «անկարելի է գուշակել» խօսքով մարգիզին հասկցնել ուզածը, զոր ուրիշ տեղ մ՚ալ բացատրած է, պարզապէս «Թուրքիոյ կործանումն» ըսել է, որ առաջ պիտի գայ բարւոքմանց անգործադրելի մնալէն։

Ինչ մը վերջը և այս անգամ ալ կըսէ թէ՝ օսմ· կառավարութիւնը իրօք կ՚փափաքի բարենորոգումները գործադրել, բայց ինչ օգուտ որ պէտք եղած դրամը չունի դայդ գործադրելու, ուստի և այնքան մեծ բան մը պէտք չէ սպասել։

Լորտ Սալիզպըրիի այս երկու յայտարարութիւններն երբ այսպէս իրարու քով բերուին, այն տեն շատ դիւրաւ կ՚հասկցուի դորս տակ պահուած այն ահարկու ճշմարտութիւնը, թէ Տաճկաստան եթէ իր դառնացած վէմ հարկ եղած բարենորոգումները չգործադրէ, իր գոյութիւնն ու յարատեւութիւնը վտանգի տակ ձգած պիտի ըլլայ, և քանզի դրամ չունենալուն համար Հայաստանի բարւոքումներն ալ չկրնար կրնգործադրել, ուստի և այս ընթացքով իր գոյութիւնն ու յարատեւութիւնը վտանգի տակ ձգած կըլլայ կոր։

Առեն մը երբ լորտ Սալիզպըրի այն յայտարարութիւնն բրաւ թէ՝ «օսմ· Դանձան վճռակը մինչև որ չշտկուի, բարենորոգումներէն մեծ բան մը պէտք չէ սպասել», տճկ· կէս պատմվրմ մը ասդին կ՚ծափահարէր ըսելով թէ «մինչ չհետակ և արդարութեամբ խօսեր է լորտը» և ուրախութենէն չէր կրնար տեսնել այդ խօսքին տակ ծածկուած այն ահարկու ճշմարտութիւնը թէ՝ «Թուրքիա բարենորոգումները ինչքան ետ ձգէ, այնքան իր գոյութիւնը վտանգի տակ ձգած կըլլայ»

Հայաստանի բարւոքմանց խնդիրն այսօր Թուրքիոյ գոյութեանը փորձարարն ըլլալուն՝ շահակութիւն մ՚առած է, այնքան կարեւոր է գիտնալ այս կէտը։ Չի եթէ այդ բարենորոգումները գործադրէ՝ Թուրքիա պիտի փրկուի և իր յարատեւութիւնը պիտի ապահովի, իսկ եթէ չգործադրէ՝ իր գոյութիւնը վտանգի տակ դրած պիտի ըլլայ ու կործանի, քան լորտ Սալիզպըրիի յայտարարութեան։

Հետեւաբար Հայաստանի բարւոքմանն գործը՝ Հայոցմէ աւելի օսմ· կառավարութեան մօտ առաւել մեծ և ծանրակշիռ կարեւորութիւն ունեցող խնդիր մը դարձած է, և ինչքան մեզ հայերս կ՚ցաւիմք Հայաստանի բարւոքմանց գործոյն յետաձգումն ու յապաղումը տեսնելով, Ր. Դուռը՝ ոչ թէ ասոկ ցաւելու, այլ պարզապէս դոզալու և սոսկալու է այդ գործոյն ետ մնալը տեսնելով, չի այդ բարենորոգումները ոչ այնքան Հայոց բարօրութեանը պիտի նպաստեն, որչափ օսմ· կայսրութեան գոյութիւնն և տեւականութիւնը ապահովելու պիտի ծառայեն։

Սակայն և այս տեսակետով ալ դարձեալ մեզ Հայս կըրկնակի ցաւ պիտի պատճառ եթէ Հայաստանի բարւոքումներըչատով չգործադրուին, մէկ ցաւն է՝ թէ հայք պիտի չարունակեն մնալ իրենց թշուառ և անտանելի կացութեանը մէջ, իսկ միւս ամենէն մեծ ցաւն այն

է թէ՝ այդ բարւոքմանց չդործադրուելովը՝ վտանգի ճանբուն մէջ ինկած պիտի տեսնեն օսմ. իշխանութեան դոյութիւնն ու տեւականութիւնը, որոյ պահպանուելուն այնքան նախանձախնդիր էին Հայերն, որ Պերլինի վեհաժողովին առաջը ելնելու համար ղրկուած և Լորտ Սալիզպըրիի մատուցուած հայկական յիշատակագրին մէջն անգամ մոլեռանդ տերած էին յայտնապէս յիշատակելու։

Բոլոր մեր այս վերի քաջածանչութիւնները կուզենք հետեւցնել թէ՝ ի.Դուռը այդ Հայաստանի բարւոքմանց խնդրոյն վրայ այնքան թեթեւ կերպիւ պէտք չէ որ նայի, և թէ պէտք է գիտենայ որ՝ այդ բարենորոգմանց յապաղումն արդարացնելու համար՝ եւրոպական դահլիճներուն տուած այն բացատրութիւնն ու պատճառը թէ «դրամ չունիմ որ ընեմ» ասի օտար տէրութեանց ոևէ ձևաս մը չտարօրինակ որ նոյն իսկ իր դոյութիւնը հիմը կ'խարամատէ, որմէ խուսափելու համար ո՛չ միայն անհոգ կենալու չէ, այլ—ինչպէս կըսեն ռամկօրէն—վրայի ձորձը ձախելով ստակ և դրամ դըտնելու է անյապաղ այդ բարենորոգումներն գործադրելու. զի առ՛վ միայն պիտի կրնայ փըրկել ընքը անխուսափելի կործանումէ, հաւատա՛լ թէ վատթար վարչութեամբ ու վարչական զեղծումներով ցաճկատան տակաւին կրնա՛յ ապրիլ, ինչպէս ապրեցաւ ցարդ, ասի պարզապէս ինքզինքը խաբել կամ ժամանակիս լեզուէն չհասկնալով, դեպ ի անդունդն ինքզինքը գահավիժել է։

Հայաստանի բարենորոգմունքը չգործադրուելովը Հայք մեծ բան մը չեն կորսնցներ, այլ դարձեալ թիւրատութեան մէջ ատեն մ՛ալ կ'չարունակեն ապրիլ ինչպես ապրած են դարէ ի վեր, բայց օսմ. տէրութիւնը այդ բարւոքումները չընելովը ինքզինքը մեծապէս պիտի տուժէ, զի իր կարուսաք իր ձեռօքը յառաջ բերած պիտի ըլլայ, նոյն իսկ բուն խոստովանութեան Լորտ Սալիզպրիի։

Պէտք է գիտնայ ի. Դուռը թէ Հայաստանի բարւոքմանց խնդիրն այնքան մեծ խնդիր մը չէ Հայոց համար, որքան մահու և կենաց խնդիր մեծ Թուրքիոյ համար։

Մ. Պատրիարքն անցեալ շաբաթու յիշատակագիրը մը յանձնած էր Գաղղիոյ և Անգղիոյ դեսպանաց, ուրկից մէկ 500 ղրկը մտցուելուն և զօրանոցի մը չինութեան սկսուելուն և ջելմունի տաճկ գայմագամ դրուելուն դէմ բողոքելու համար։

Այս անգամ յիշեալ դեսպանք գրաւոր կերպիւ կիմացընեն Մ.Պատրիարքին թէ՝ իրենք ալ խիստ դիտողութիւններ ու բողոք ըրեր են այս մասին Բ. Դրան, յաւելլով միանգամայն թէ կայս. քննիչներն, որք բարենորոգմանց գործադրութեան համար ղրկուեր էին, տակաւին բան մ՛ալ չեն ըրած։

Գաղղիոյ դեսպանը նաև գատղրութեամբ մ՛ալ պատասխանելով Մ. Պատրիարքին մէկ նամակին, որով երուսաղէմայ մէջ կաթոլիկութեան դարձած հայ վարդապետի մը արարքներուն դէմ կ'գանգատէր, այս առթիւ դեսպանը ցաւ յայտներ է թէ երուսաղէմայ հայ Պատրիարքը՝ տարին մի անգամ Մ. Ծակոբայ տաճարն Լատինաց երթալ պատարագելն արգիլելով, ատոնց իրաւունքը բռնաբարած է, ուստի կ'խնդրէ Մ. Պատրիարքէն որ այդ արգելքը վերցնել տալու համար զարժանն իգործ դնէ։

Կ'իշեն անշուշտ ընթերցողք թէ Լատինք Մ. Ծակոբայ տաճարին վրայ ալ սեպհականակցութեան իրաւունք մ՛ունենալ պնդելնուն վրայ էր որ եսայի պատրիարքն ալ բոլորովին տաճարին դուռն իրենց գոցելու ստիպուեցաւ։

—Խորբերդէն անցնելով Տիգրանակերտ գացող բարւոքմանց յանձնաժողովի կայս. քննիչ Ապէտին պէյի հետ դըտնուզ Անտօն Մանաս էֆ.ի նըկատմամբ, տեղւոյն Առաջնորդին կողմանէ գանգատանաց գիր մը հասած է երէկ ի Պատրիարքարան, յայտնելով թէ սա հռովմէական բլալով, հակառակ իր պաշտօնին պահանջած անաչառութեանը ու տրդարասիրութեան, հայոց դործերը երեսի վրայ թողով, կաթոլիկաց պահանջումները պաշտպանելու սկսեր է։

—Պատր. փոխանորդ սրբազանը կիմացնամք թէ հիւանդ բլալով 2 օրէ ի վեր տունը մընալու ստիպուեր է։

—Կ'հաւատան թէ Հայաստանի տեղ Բիւրտահման բառը պաշտ. գրութեանց մէջ յիշատակուելուն դէմ Մ. Պատրիարքը հարկ եղած տեղը բողոք և պիտողութիւն ըրեր է։

—Ընդհ. ժողովը գումարման հրաւիրուած է յառաջիկայ ուրբաթ օր յիս. 22ին, Օրակարգ ունենալով 1.Ընտրութիւն եւմտ. յանձնախմբի Ազգ. ժողովոյ, 2. վիճաբանութիւն պիւտճէի 79-80 ամի (չարունակութիւն) 3. Տեղեկագիր նախաձեռն. դիւանի ի վերայ ծրագրի ևօթն յաւելուածական կետերու Ազգ. ժողովոյ կանոնադրութեան։

ՀԵՈՒԱԳՐԱԼՈՒՐՔ

Ֆիլիպէ 29 յնս.

Եւրոպ. յանձնաժողովոյ վերջին նստին մէջ Աստրիոյ պատուիրակը, Գարլօվա դարձող հըրէից դէմ եղած բռնութեանց դեպքին վրայ յանձնաժողովոյ ուշադրութիւնը հրաւիրելով, առաջարկեց որ այս մասին ձեռք առնուլ հարկ եղած միջոցներուն վրայօք խորհուի. Յանձնաժողովոյ անդամց չատք սոյն առաջարկը թեպետ քնդունեցին, իսկ մինակ ռուս անդամը հակառակելով, խորհրդակցութիւն տեղի չունեցաւ։ —Յանտարմայի կազմակերպութեանն օգնելու համար Գաղղ. և Անգղ. դեսպանատանց կողմէն Ֆիլիպէ ղրկուող գինուրական կցորդներն հասան.Յանձնաժողովոյ գաղղ. Ա. պատուիրակ Պ. տը Րէնկ ալ վերադարձաւ, Բոտօր լերանց տահմանադիծն որոշող յանձնաժողովոյ օսմ. և գաղղ. պատուիրակներն այս առաւօտ իրենց պաշտօնավայրը մեկնեցան։

Յնս. 30.—Գարլօվայի հըրեայ գաղթականաց դէմ գործուած բռնութեանը դէմ Պ. Հիրշի փոխանորդը Պ. Վենեզեանի բողոքեց Արևլ. Րումելիի Յանձնաժողովոյ, որն որ տեսչաց խորհրդոյն որոշմանը վրայ տնօրինեց որ՝ 1 յոյն և 1 կաթոլիկ և 3 Պուլկար անդամէ բաղկացեալ յանձնաժողով մը Գարլօվա ղրկուի, որն որ հետք խնդ մ՛ալ հետեւցնէ ու ուղղակի պատասխանատու ընէ նահանգապետը։

Լոնտրա 30 յնս.

Լոյիւ-Նաբոլէոն իշխանին մարմինը յիս. 9ին Լոնտրա պիտի հասնի։ Անգ. կառավարութիւնը չքեղ յուղարկաւորութեան հանդէսի մը պատրաստութիւն կ'տեսնէ։

Գահիրէէն այսօր (բշ.) առնուած հեռագիր մը կ'տանուցանէ թէ Իսմայիլ բաշա մեկներ է Եվիպտոսէն, Ուր երթալն յայտնի չէ. բայց Զմիւռնիա պիտի երթէ կ'կարծուի։

Անգղիոյ Թագուհին վերադարձի. Պարքի՝ Երուսաղէմայ անգղ. եպիսկոպոս անուանեց վերաճանեալ եպիսկոպոսին տեղ։

Այս առաւօտ հասած

Աղէկսանդրիա 30.—Իսմայիլ բաշա իր երկու որդւոյը հետ այսօր Նաբօլի մեկնեցաւ։

Բարիզ 30.—Գաղղիա և Անգղիա հաւանութիւն չեն տար 1873ի (1290) հրովարտակին ջնջելուն, որ ինչ ինչ առանձնաշնորհումներ կ'տայր Եվիպտոսի։

Այս խնդրոյն վրայ Դրան հետ բանակցութեան սկսած են։

ԴՐԱՄԱԿԱՆ

Այս առաւօտ բացուեցաւ	42.35
Րուժէլի	46.50
Թղթադրամ	1305.00
Պղինձ	182.20

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Նախկին եպարգոս Մահմուտ Նէտիմ բաշա երէկ առաւօտ մայրաքաղաքս հասաւ, և ուղղակի Սուլթանին ներկայանալէն յետոյ իր ապարանքը գնաց, ուր բազմաթիւ անձինք գալուստը ողջունելու համար շնորհաւորութեան գային իրենից։

—Հեռագրաց նախարդ վերատեսուչ Իզզէթ էֆ. որոյ վերայ խել մը նենգութիւններ հասատատուելով պաշտօնանկ եղեր էր, քիչ է ըսացեր որ նորէն այս անգամ իր պաշտօնին մէջ վերահաստատուի, կայս. պալատըն ունեցած իր մէկ պաշտպանին չնորհիւը։

Վեհ. Սուլթանը երկար ևս գաղտնի հեռագիր մ՛ունենալով Բարիզ հաղորդելու, կուզէ որ նոյն իսկ հեռագրաց վերատեսուչ Հայտար էֆ. պալատն երթալով իր ձեռօքը զարնէ, Իզզէթ էֆ.ի պաշտպանին յանձնուելով այս գործը, ասա ալ յարմար առիթը կ'գտնէ և կիմացնէ Սուլթանին թէ Հայտար էֆ. հեռագիր զարնել չգիտեր, մինչդեռ իր նախորդը Իզզէթ էֆ. շատ աղէկ գիտէ։

Ասոր վրայ Իզզէթ էֆ. կը կանչուի պալատը և կ'զարնէ հեռագիրը, որն որ մեկնած ատենը կայս. հրաման մ՛ալ հետը կ'տանի թէ Հայտար էֆ.ի տեղ Իզզէթ էֆ. նորէն հեռագրաց վերատեսուչ ըլլայ։

Եպարգոսն իմանալուն պէս գայս, կ'խռովի և ուղղակի պալատը գիմելով, հարկ եղած բացատրութիւնները տալէն յետոյ, հապա հազ կ'յաջղի եղած հրամանը ետ առնել տալու։

—Պօսնայի ապստամբապետ հռչակաւորն Հաճի Լոյա յիս. 17ին Սէրայէվոյի հիւանդանոցէն փախեր, իսկ հետեւեալ օրը անատոլի մէջ մէկ բանուելով նորէն բանտարկուեր է։

—Պուլկարիոյ Պաթէմպերկի իշխանը Լիւպեկ ըրած իր այցելութեանը մէջ, վիկթորիա թագուհիէն քնդուներ է բազմանաց կարգի մեծ խաչանշանը, պելճիգայի թագաւորէն Լէոպոլտի կարգին մեծ խաչանշանը և Գերմանիոյ կայսրէն՝ կարմիր-Արծուոյ Ա. կարգի պատուանշանը։

—Պօտոյ սրպիական գեսպանը բողոքեր է Դրան թէ՝ քանի մ՛օրէ ի վեր Սրենավուտներն Սրպիոյ սահմաններէն ներս անցնիլ սկսեր են և թէ վրանճաչի կազմերը մէկ քանի պինեալ կռիւներ եղեր են։

—Եվիպտոսէն կ'գրեն թէ 1876էն ի վեր եղած երերուն պարտուց դումարը 8 1/2 միլիոն անգղ. ոսկւոյ կ'հասնի։—Խաւիվիէի ընկերութեան չորեքշաբթի ըրած նստողութեան մէջ գաղղ. ընկերութիւնը իր ստակները չը

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՐԱՎԱՆԴԱՑՈՒՄ ՀԵՆՐԻ ՎԱՐԴԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Հայկական դարավանդացումը ներառում է Հենրի Վարդանի վարդապետության տարիները՝ 1250-1271 թթ.։ Այս ժամանակաշրջանում նա ստեղծեց իր հիմնական աշխատությունները, որոնք ամփոփում էին հայ միջնադարյան մտքի նվաճումները։

Վարդանի կյանքի առաջին տասնամյակները անցան Կիլիկիայում, որտեղ նա ստացավ իր կրթությունը։ Այնտեղ նա ծանոթացավ հունական և լատինական գիտության հետ, ինչը հետագայում մեծ ազդեցություն ունեցավ նրա մտածողության վրա։ Կիլիկիայի անկումից հետո նա տեղափոխվեց Հայաստան, որտեղ ապրեց մինչև իր մահը։

Վարդանի ամենակարևոր աշխատությունը «Պատմություն հայոց» երկն է, որը ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 13-րդ դարի կեսերը։ Այս աշխատությունը հայ պատմագրության մեջ նոր էջ բացեց, քանի որ հեղինակը առաջին անգամ փորձեց ներկայացնել ոչ միայն իրադարձությունների հաջորդականությունը, այլև դրանց պատճառահետևանքային կապերը։

Վարդանի մեկնաբանությամբ հայ ժողովրդի պատմության գլխավոր շարժիչ ուժը նրա հավատքն էր և ազգային միասնության գիտակցությունը։ Նա կարևորում էր եկեղեցու դերը ազգային ինքնության պահպանման գործում, սակայն միևնույն ժամանակ քննադատաբար էր վերաբերվում հոգևորականության որոշ ներկայացուցիչների գործունեությանը։

Վարդանի լեզուն գրական է, ոճը՝ պերճախոս։ Նա լայնորեն օգտագործում է հռետորական հնարքներ, հաճախ դիմում է հարցադրումների և բացականչությունների։ Օրինակ՝ նկարագրելով Ավարայրի ճակատամարտը, նա գրում է. «Ո՞վ կարող է պատմել այն սարսափը, որ պատեց հայոց զորքերը, երբ տեսան անթիվ թշնամու բանակը»։

Վարդանի աշխատությունը մեծ ազդեցություն ունեցավ հետագա հայ պատմագիրների վրա։ Նրա մեջբերումները հանդիպում են Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արևելցու և այլ հեղինակների երկերում։ Ժամանակակից գիտնականները նրան համարում են հայ միջնադարյան պատմագրության ամենաազդեցիկ դեմքերից մեկը։

Վարդանի մահվան թվականը ճշգրիտ հայտնի չէ։ Ենթադրվում է, որ նա մահացել է 1271 թվականին՝ Հաղպատի վանքում, որտեղ նա վերջին տարիներին ապրում էր որպես միաբան։ Նրա գերեզմանը մինչև օրս չի հայտնաբերվել։

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՐԱՎԱՆԴԱՑՈՒՄ ՀԵՆՐԻ ՎԱՐԴԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Հայկական դարավանդացումը ներառում է Հենրի Վարդանի վարդապետության տարիները՝ 1250-1271 թթ.։ Այս ժամանակաշրջանում նա ստեղծեց իր հիմնական աշխատությունները, որոնք ամփոփում էին հայ միջնադարյան մտքի նվաճումները։

Վարդանի կյանքի առաջին տասնամյակները անցան Կիլիկիայում, որտեղ նա ստացավ իր կրթությունը։ Այնտեղ նա ծանոթացավ հունական և լատինական գիտության հետ, ինչը հետագայում մեծ ազդեցություն ունեցավ նրա մտածողության վրա։ Կիլիկիայի անկումից հետո նա տեղափոխվեց Հայաստան, որտեղ ապրեց մինչև իր մահը։

Վարդանի ամենակարևոր աշխատությունը «Պատմություն հայոց» երկն է, որը ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 13-րդ դարի կեսերը։ Այս աշխատությունը հայ պատմագրության մեջ նոր էջ բացեց, քանի որ հեղինակը առաջին անգամ փորձեց ներկայացնել ոչ միայն իրադարձությունների հաջորդականությունը, այլև դրանց պատճառահետևանքային կապերը։

Վարդանի մեկնաբանությամբ հայ ժողովրդի պատմության գլխավոր շարժիչ ուժը նրա հավատքն էր և ազգային միասնության գիտակցությունը։ Նա կարևորում էր եկեղեցու դերը ազգային ինքնության պահպանման գործում, սակայն միևնույն ժամանակ քննադատաբար էր վերաբերվում հոգևորականության որոշ ներկայացուցիչների գործունեությանը։

Վարդանի լեզուն գրական է, ոճը՝ պերճախոս։ Նա լայնորեն օգտագործում է հռետորական հնարքներ, հաճախ դիմում է հարցադրումների և բացականչությունների։ Օրինակ՝ նկարագրելով Ավարայրի ճակատամարտը, նա գրում է. «Ո՞վ կարող է պատմել այն սարսափը, որ պատեց հայոց զորքերը, երբ տեսան անթիվ թշնամու բանակը»։

Վարդանի աշխատությունը մեծ ազդեցություն ունեցավ հետագա հայ պատմագիրների վրա։ Նրա մեջբերումները հանդիպում են Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արևելցու և այլ հեղինակների երկերում։ Ժամանակակից գիտնականները նրան համարում են հայ միջնադարյան պատմագրության ամենաազդեցիկ դեմքերից մեկը։

Վարդանի մահվան թվականը ճշգրիտ հայտնի չէ։ Ենթադրվում է, որ նա մահացել է 1271 թվականին՝ Հաղպատի վանքում, որտեղ նա վերջին տարիներին ապրում էր որպես միաբան։ Նրա գերեզմանը մինչև օրս չի հայտնաբերվել։

LOTERIE.

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԴ ՍԷՐԻ

Համպուրկի Դերմանական կառավարութիւնը, որ սոյն նոր դրամական մեծ վիճակահանութիւնը վաւերացուցած է, ոչ միայն բաժնետոմսերուն ցրուիլը, այլև ամեն քաշուած վիճակահանութիւնը կ'հակակշռէ, պարգևներուն ճշդիւ վճարմանը հսմար Գանձուն բոլոր արժէքտոմսերովը երաշխաւորելով, այնպէս որ իւրաքանչիւրին ամեն կողմանէ ամենամեծ ապահովութիւն տրուած է։

Արդէն այս պարագային բաւական ապացոյց մնէ թէ սոյն վիճակահանութիւնն ամեն ապահովութիւնն ունի։ Սոյն նոր մեծ վիճակահանութիւնն այժմ մինակ 82.000 տոմսակէ կ'բաղկանայ, յորոց 40.000ը անպատճառ պիտի չահին, որմէ բացայայտ կերևի սոյն ձեռնարկութեան չահաբեր թիւնը, վասնզի տոմսակաց գրեթէ կէսը վաստկող պիտի ըլլան։ Բոլոր պարգևները արագաբար մէկմէկու յաջորդող միայն 6 բաժանմամբ պիտի քաշուին։ Առաջին մեծ պարգևը պիտի ըլլայ

533,000 Ֆրանկ

Իսկ երկրորդական պարգևներն են՝ դլխաւորաբար

Տոմսակ	Ֆրանք	էն	Ֆրանք	Տոմսակ	Ֆրանք	էն	Ֆրանք
1	333·333	»	333·333	5	10·666	»	53·330
1	200·000	»	200·000	1	8·000	»	8·000
1	133·333	»	133·333	54	6 666	»	359·964
1	80·000	»	80·000	5	5·333	»	26·665
1	66·666	»	66·666	70	4·000	»	280·000
2	53·333	»	106·666	216	2·666	»	575·856
2	40·000	»	80·000	2	2·000	»	4·000
5	33·333	»	166·665	2	1·600	»	3·200
2	26·666	»	53·332	531	1·333	»	707·823
12	20·000	»	240·000	670	666	»	446·220
24	13·333	»	319·992	945	400	»	378·000

և են. և են.

Համագումար՝ չահող բաժինք 40·000 պարգև։

Ամեն մէկ վիճակահանութենէ իսկ և իսկ ետքը, դերմանական կառավարութեան հսկողութեան ներքև, բոլոր չահող բաժիններուն պարգևները անվիջապէս Ոսկեդրամով պիտի վճարուին։

Մենք սոյն սկզբնական տոմսակներուն վաճառումն յանձն առած ըլլալով, առանց վերադիր ծախուց, իրենց բուն գիներովը կ'ղրկեմք։ Առաջիկայ 2 բաժանմանց վիճակահանութեանց համար պաշտօնական որոշուած գինն է

Սկզբնական 1 տոմսակի համար **Ֆրանք 45.—**

Իսկ կէս տոմսակի համար **Ֆրանք 22.50**

Տոմսակաց արժէքը պէտք է ուղարկել գաղտնական պանքայի դրամատոմսերով, թղթատարութեան ծախքը ղրկողին վրայ բռնելով, և կամ Գաղղիոյ, Անգղիոյ կամ Դերմանիոյ պանքաներու վրայ փոխանակագրելով։

Դրամն ընդունելնուս պէս յատուկ նամակաւ կ'ղրկեմք յանձնարարեալ տոմսակները, որոնք տէրութեան Զինանշանով վաւերացեալ են. ասոնց հետ կ'ղրկեմք նաև վիճակահանութեան Յայտագիրն ալ գաղղիական լեզուաւ, և ամեն վիճակարկութենէն յետոյ պարգևներուն և չահող թուոց պաշտօնական ցուցակը. բաց յայտնեմք պարգևները պիտի հրատարակուին Արևելքի դլխաւոր լրագրաց մէջ։ Շնորհակալ ենք թուրքիոյ հասարակութենէն, սոյն վիճակահանութեան առաջին Սէրիին նկատմամբ ունեցած մեծ հոգածութեանն համար, և կ'խոստանամք նաև յապագային միևնոյն ճշդութեամբ կատարել իրենց յանձնարարութիւնները, կազդեմք, որ իրենց յանձնարարութիւնները վութով ուղարկեն, վիճակահանութենէն առաջ, այսինքն՝ յառաջ քան 9 ՕՒՆԼԻՍ (քսան Լատ.) առ մեր գործատունն ուղղակի ԻԶԷՆԹԱԼ ԵՒ ԸՆԿԵՐՔ, դլխաւոր գրասենեակ վիճակահանութեան ի Համպուրկ (Գերմանիա)

ISENTHAL & Cie *Bureau principal de Loterie.*

Hambourg (Allemagne).

Մեր թղթակցութիւնք գաղղ. անգղ. և իտալերէն լեզուօք կատարուելով, կ'խնդրեմ որ այս լեզուներէն մէկովը մեզ հետ թղթակցի, Նամակ մը Արևելից քաղաքներէն մինչև Համպուրկ՝ 180 ժամէն կ'հասնի և փոխադարձաբար։

Adolf SteinerBureau d'annoncesHambourg

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՎԵՆԵՏԿՈՑ ՄԽԻԹԱՐԵԱՆ
ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ՎԻՐԳԻԼԻԱՑ ԵՆԷԱԿԱՆ, նոր թարգմանեալ ի Դեր. եդ. ուարդայ ընտիր հայկարանութեամբ ի չափս հայկականս. գին ֆրանք 4.25։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՑԵՐԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ, հատոր բ. սկըսեալ չորեքտասաներորդ դարէն կ'հասնի մեր օրերը, գրեալ աշխարհաբար լեզուաւ և կարևոր հմտութեամբ. ֆրանք 5.50։

լուսոյն օգնութեամբը՝ դէմքին վրայ ուրախութեան նշոյլ մը կ'տեսնուէր, որ կ'գար իր երեսին միակերպ դեղնութիւնը պայծառացնել. . .

Փողոցին պատերուն հանած արձագանգը՝ հեռաւոր տեղէ եկած աղմուկի մը կ'նմանէր, յորմէ պերթա սոսկմամբ վեր կ'ցաթկէր, և ապա կ'շարունակէր նորէն իր ընթացքը։

Ո՞ւր կ'երթար այսպէս. . . Անշուշտ գիտէր իր գացած ճանբան, զի ամեն փողոցի գլուխ՝ կարճ տատանումնքէ մ'ետքը՝ իսկոյն կ'որոշէր դէմն ելնող փողոցներէն որո՞ն մէջ մտնելիքը, և բնաւ խարխափանօք չէր քալեր։

Իսկ ճանբան շատ երկայն էր։ Պերթա՝ Սէն-Ժիլնոր փողոցն ամբողջ քալեց, Ոմարշէի ճեմավայրն անցաւ, և անվերջանալի ճանբայներն մտաւ, որք Սէն-Մարթէնի լրանցքէն սկսեալ երկու կողմերը գիւղացւոց խանութներով, մինչև Բարիզի հիւսիսակողման բլուրներն կ'հանեն։

*Հոս ալ նոյնպէս առանձնութիւն և տխուր ու տքրտում կերպարանք մը կ'տեսնուի, բայց չունի այլևս իր այն առջի մեծութիւնը։—Աստ և անդ, փայտաշէն տղմածեփ ցած ու խեղճ տուներուն շարքին մէջ, տեղ տեղ կ'տնկուին բարձրաբերձ և ընդարձակ չէնքեր, մասնաւորապէս այն տեսակ արուեստիս մը զբաղող անձանց բնակութեանը յատկացեալ, որք քաղաքին կեդրոնէն դուրս կ'ձգուին, և որք աւելի նախամեծար կ'համարին չքաւոր և աղքատ թաղերն ապականելու։ Ամեն մէկ քայլի, դալարապատոյտ, նեղ ու երկայն ճանբայներ կը բացուին փողոցին վրայ, որք մարդ չգիտէ թէ ո՞ւր կ'առաջնորդեն այդ փողոցին ետևներէն, ուր փայտաշէն կերտուածոց ահագին գործարաններ կ'գտնուին և. որոցմէ մէկ տաշելն անգամ չեն վառեր այդ հեծանա

բանաց մօտերը բնակող դրացիք։

Այս տեղն չնմանիր այն աղրիւսներուն, ուր թըչուառութիւնք չեղջակուտեալ՝ կ'խմորին, կ'փտտին, կ'որդնոտին, և զաշիր գարշահոտութիւն մը կ'բուրեն իրրև լռելեայն և սոսկալի բողոք մը ամբարիշտ եսականութեան դէմ այն կարգի դաս մը մարդոց՝ որք անամօթաբար ինքզինքնին պատճելով կ'անուանեն։ —Ջի առևտրական բառգիրքը այս աստիճան լրբութեան հասած է։ Դրամբ պարզապէս կ'անձնաւորի։ Մարդիկ կան որոց հոգին միմիայն իրենց ամուր–անտուկն (քասա) է։ Դժոխոթէ բառն արդարև ազդուութիւն մ'ունէր, բայց բաւական չէր այսքանը, զի պէտք եղածին չափ չէր կրնար բացատրել վոխակերպութեան անպատկառութիւնը։ Այս բառը գտնէ իր եաին ենթադրել կ'տայր մարդ մը և մարդկային սրտի մը պէս բան մը։ իմ դժոխքնէրս.՝ սքանչելի՛ խօսք է արդարև . . . բայց տակը ոսկիէն զատ ուրիշ բան չկայ։

Վերջապէս այս տեղը այն պաշտօնապէս մաքրուած բայց միշտ թունաւորեալ Պիէվրի եզերքն ալ չէ։

Ասի չափով աղբատ թաղ մն է. ուր մարդ կէս աւ նօթի կ'մնայ. Զքաւորութիւնը հոս այն աստիճան բանատեղծական չափազանց վիճակին չէ հասած։ Մարդ կ'նեղուի հոս առանց ձայն հանելու։

Պերթա բաւական հեռացեր էր արդէն Բօյեալի հրապարակէն ու Մալըբրեի օթևաններն, հոդնութիւնը արդէն վրան տիրել սկսած էր։ Դադարական և հանդարտ նստնէին թուլացեալ սրունքներն՝ իր մարմնոյն ծանրութեանը տակ կ'ծռէին։ Սակայն միշտ յառաջ կ'երթար, և յամառ քաջասրտութեամբ մը զօրացած՝ այս անվերջ փողոցներուն մէկէն կ'ելնէր միւսը կ'մտնէր, որոց ամենքն ալ գիւղերու միակերպ չինուած փողոցաց պէս իրարու կ'նմանէին։